

# Իրավագրան մշակույթ

Չկա Հասարակութեան  
անուշ իրավունքի  
Ubi societas ibi jus

Ո Ր Ր Ք Ք  
թիվ 15 (35)  
2008 թ. օգոստոսի 8

## ԴԱՐՁՅԱԼ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի կառուցապատման ծրագրերով քաղաքացիների սեփականության օտարման հարցերը շարունակում են խնդրահարույց մնալ այն պատճառով, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքն ունի բազում ծուղակներ, որոնցից խույս տալ չեն կարողանում օտարվող գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունք ունեցող քաղաքացիները:

Դեռևս օրենքի նախագծի քննարկման ընթացքում ներկայացված հիմնական առարկություններից է եղել այն դրույթը, ըստ որի՝ անթույլատրելի է հարկադրել օտարվող գույքի սեփականատիրոջը և այլ գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիներին գույքի օտարման հարցերով հարաբերվել մասնավոր գործարարի հետ, որն, ըստ օրենքի, կարող է հանդես գալ որպես ձեռքբերող:

Առարկության տրամաբանությունն այն է, որ մեր իրականության պայմաններում ձեռքբերող ճանաչված մասնավոր գործարարը ցանկացած վեճում լայնորեն օգտագործելու է իր ունեցած զանազան կապերն ու միջոցները, որին մյուս կողմը հակադրելու ոչինչ չունի:

Զնայած առարկություններին, օրենքն այդպես ընդունվել է, և սեփականատերերն այսօր հարկադրված են իրենց սեփականությունից, գույքային այլ իրավունքներից հրաժարվել հոգուտ զանազան օտարահունչ անվանումներով ՍՊԸ-ների, ընդունել նրանց առաջադրած հաճախ նվաստացուցիչ պայմանները:

ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 25-ի թիվ 108-Ն, 2008 թ. հուլիսի 3-ի թիվ 347-Ն որոշումներով Երևան քաղաքի մի շարք հատվածներում իրականացվող կառուցապատման ծրագրերում ընդգրկված տարածքները ճանաչվել են որպես հանրային գերակա նպատակների համար նշանակություն ունեցող տարածքներ և հայտարարվել օտարման գոտիներ:

Որոշմամբ այդ տարածքների ձեռքբերող է հայտարարվել Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը:

Այնուհետև ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1150-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 108-Ն և 347-Ն որոշումներում, ըստ որոնց՝ օտարման ենթակա տարածքների զգալի մասի ձեռքբերողներ են ճանաչվել արդեն տարբեր մասնավոր կազմակերպություններ:

Որպես օտարման գործընթացների համակարգող և պետական լիազոր մարմին հանդես է գալիս Երևանի քա-

ղաքապետը, որն օրենքով պարտավոր է կառավարության որոշումներն ուղարկել օտարվող գույքի սեփականատերերին և մյուս գույքային իրավունքներ ունեցողներին, ինչպես նաև կազմել օտարվող գույքի նկարագրության արձանագրությունը:

Քաղաքապետը պետության լիազոր և գործընթացը համակարգող մարմնի իր լիազորություններն իրականացնում է հիմնականում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի միջոցով (այսուհետև՝ ՕԻԳ), որի արտավոր գործունեության մասին շատ է խոսվել «Հյուսիսային պողոտա» ծրագրի իրականացման ընթացքում:

Պետության լիազոր մարմինը, համեմատելով լիազորություններն իրականացնող ՕԻԳ-ի, կոչված լինելով հանդես գալու որպես օտարվող գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիների իրավունքների երաշխավոր, ծառայություններ մատուցելու մասին պայմանագրեր ունի ձեռքբերողների հետ և դատարանում հանդես է գալիս որպես ձեռքբերողների շահերի ներկայացուցիչ: Փաստորեն, ձեռքբերողի և վերահսկող մարմնի շահերը համընկել են:


Շահերի համընկման թելադրանքով է պայմանավորված նաև այն, որ օտարվող գույքի նկարագրության արձանագրությունը կազմելու առնչությամբ լայնորեն կիրառվում է օրենքի 7-րդ հոդվածի այն դրույթը, որ եթե գույքային իրավունք ունեցողների կողմից արգելքներ են ստեղծվում նկարագրության արձանագրությունը կազմելիս, այն կազմվում է առկա հնարավորություններով: «Առկա հնարավորություններ» արտահայտությունն ընկալվել է այնպես, որ արձանագրությունը կարելի է կազմել բացառապես կադաստրից տրամադրված սեփականության իրավունքի վկայականի տվյալներով, որում հաճախ արտահայտված չեն գույքի բարելավումները, ինքնակամ կառույցները, հողամասում առկա տնկիները, ընտանիքի կազմը, տվյալ հասցեում հաշվառված անձինք: Այնուհետև արձանագրությունը տրամադրվում է ձեռքբերողին, որն էլ հենց այդ տվյալներով իրականացնում է օտարվող գույքի գնահատումն, այսպես կոչված, անկախ փորձագետի միջոցով:

Գույքի սեփականատերը, նաև այլ գույքային իրավունք ունեցող քաղաքացիներն սթափվում են միայն այն ժամանակ, երբ ձեռքբերողը ներկայացնում է գույքի դիմաց գնային իր առաջարկը: Գույքի գնահատման փաստաթուղթը սեփականատիրոջը չի ուղարկվում:

→ էջ 4

## ԶԱՅՆ ՄԵՏԱՑ

Ով կորցնելու բան ունի, նա ստրուկ է ինչ-որ մտքի, նախապաշարմունքի:



ՎԻՅԱՆ ՇԵՐՍՊԻՐ

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում .....	էջ 2
«Նոյեմբերյանի երիտասարդական գործունեության ակումբ» ՀԿ .....	էջ 3
Ջանիբեկ Ղուկասյան. «Ես զարմանում եմ...» .....	էջ 3
Այս քննաշրջանում բարձր միավորների թիվը 50%-ով նվազեց .....	էջ 3
Արմինե Ղուկասյան. «Գեղարքունիքի մարզը՝ ՄԻԱԿ-ի տարածման վտանգի տակ» .....	էջ 4
Հերմինե Բաբուռյան. «Վարորդի, հետիոտնի և պետավտոտեսչության իրավունքների հանգույցում» .....	էջ 4
Փորձաքննվեց «Բյուրակն» կրթահամալիրի քառամյա գործունեությունը .....	էջ 5
Հրաչիկ Մարուքյան. «Հարյուրավոր և հազարավոր «քարե տաշտակների» առեղծվածը...» .....	էջ 6
Մորի Թառոյան. «Իմ Համլետի լինել-չլինելը» .....	էջ 6
Հոգևոր և ազգային արժեքների ջատագով սրբազան Վազգեն Ա կաթողիկոսը .....	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ .....	էջ 8



# Մենք՝ քաղաքացիական Հասարակությունը

Դիտարկում

## Ես զարմանում եմ...

Երբ մարդը դադարում է զարմանալուց, ուրեմն՝ նա արդեն դադարել է ապրելուց: Դին ասացվածք

Գուցե լինեն մարդիկ, ովքեր չզարմանան, եթե ասես, որ վաղը Երևանից տուրիստական օդանավը թռչելու է Լուսին: Կմտածեն՝ հրաշքների դար է: Իսկ ես կզարմանամ՝ ինչպե՞ս թե:

Այդ մարդիկ տարիներ առաջ էլ չզարմացան, երբ հայտնվեց բջջային հեռախոսը: Սովորականի պես մի օր արթնացան ու ձեռքը մեկնեցին դեպի բջջայինը, ասես այն մշտապես էլ դրված էր այնտեղ, ինչպես ծխախոտի տուփը, ու որոնեցին-գտան Լուս Անջելեսում կամ աշխարհի ինչ-որ ծայրում գտնվող իրենց բարեկամի հեռախոսահամարն ու սեղմեցին զանգի կոճակը:

- Ալլո՞...

Իսկ ես նորից զարմացա.

- Ա՛յ թեզ բան: Հազարավոր կիրումներ այդ ինչպե՞ս է ձայնը գնում, գտնում հասցեատիրոջը:

Ձայնային ալիքների տարածման, էլեկտրոնային հաղորդող-ընդունող սարքերի մասին մոռացե՛լ էի: Ի՞նչ: Պարզապես չեմ կարող չզարմանալ:

Բայց ես զարմանում եմ ո՛չ միայն գիտատեխնիկական իսկապես հրաշքի մեծամոլոր նվաճումների վրա: Ձարմանում եմ, որ, օրինակ, շատ հայ երգիչ-երգչուհիներ, արտասահմանյան երկրներ համերգների մեկնելով, օտարալեզու երգերով են ներկայանում ունկնդիրներին: Օտարազգի ունկնդրին հաճոյանալու՞ համար: Բայց չէ՞ որ վերջինիս համար առավել հետաքրքիր է հայկական երգը, հայկական մշակույթը: Մինչդեռ Հայաստան եկող օտարերկրացին հայերեն չի երգում: Զի՞ կարող: Ինչ խոսք, կարող է, բայց պատվով և արժանիորեն ներկայացնում է ի՞ր երգը, ի՞ր մշակույթը:

Վերջին շրջանում մեր երկրում խիստ մոդայիկ է դարձել իսպանական, լատինամերիկյան պարերի համատարած ուսուցումը: Այլ ազգերի մշակույթների իմացությունը միայն պատիվ կարող է բերել մարդու: Աշխարհայացքի ընդլայնումն ու գիտելիքների հարստացումը խրախուսվում և գնահատվում է:

Երբ անցյալում հայ իրականություն մուտք գործեցին վալսը, տանգոն, ռումբան, ֆոքստրոտը և բազմաթիվ այլ ոչ հայկական հրաշալի պարային տեսակներ, դրանք արագորեն տարածում գտան: Բայց չմոռացվեց և չէր կարող անտեսվել հայկական անզուգական պարը: Այսօր, սակայն, քոչարիից բացի՝ հայերս հայկական ժողովրդական այլ պարատեսակների իմացությանը չենք կարող աչքի ընկնել: Ես դարձյալ զարմանում եմ: Մեր պապերն ու ծնողները փայփայել ու մեզ են փոխանցել հայկական պարարվեստը, որ մոռացությանը կորցնե՞նք դրանք: Շատ հաճախ պարուսույցները, այս բնագավառի առաջատար մասնագետներն անուշադրության են մատնում հայկական պարարվեստի մասին իրենց գիտելիքները սաներին փոխանցելու կարևոր առաքելությունը:

Ձարմանում եմ նաև ավելի առօրեական բաների վրա: Ձարմանալի է, օրինակ, որ մարդիկ զբոսայգիների ծառերը հատում են շենքեր կառուցելու անազնիվ պատճառաբանությամբ: Առավել զարմանում եմ այն պետական այրերի վրա, ովքեր ի պաշտոնե պարտավոր են արգելել նման երևույթները, բայց անխոս նպաստում են այդ զանցանքների իրագործմանը, դյուրին ու անխռով թույլտվություններ են «վաճառում» քաղաքի կենտրոնում (և ոչ միայն) ծաղկամարգերի ու մայրերի վրա խանութներ, դեղատներ և սպասարկման այլ կետեր կառուցելու համար՝ խաթարելով քաղաքի ճարտարապետական տեսքը, աղոտոելով շրջակա միջավայրը, ոտնահարելով մարդկանց իրավունքները:

Ձարմանում եմ նաև մեր որոշ վայ-մանկավարժների վրա, ովքեր, տեսնելով հանրակրթական համակարգի «բարեփոխումներ» հետևանքով օրավուր խորացող անգրագիտությունը, ձեռքները հուսահատ թափ են տալիս՝ կուզեն, թող սովորեն, չեն ուզի՝ իրենց գործն է: Տվյալ դեպքում երեխային մնում է կամ հեռուստացույց դիտել, կամ համակարգչային խաղերով տարվել:

Ձարմանքս հայտնեմ նաև Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի գործունեության առնչությամբ: Մի՞թե նրանց չի մտահոգում, թե ինչ են ցուցադրում հեռուստաալիքները... Հեռուստատեսությունը, փաստորեն, գիտակցաբար թե ակամա դառնում է դաժան, անճշակ սերնդի գլխավոր դաստիարակը:

Երբ 2007 թ. հանրապետական գրական մրցանակ շնորհվեց հենց հայիոյալեզու «բանաստեղծությունների» մի ժողովածուի հեղինակին, գրեթե ոչ ոք չզարմացավ: Ես... ապշեցի:

ՋԱՆԻԲԵԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ



## «ՆՈՅՆԵՄԲԵՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ» հասարակական կազմակերպություն

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպվել են տարբեր բնույթի փառատոներ, քննարկումներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Ակունքն ակտիվ մասնակցություն է ունեցել հետևյալ միջոցառումներին՝

- «Արեճա 2006» երգի մրցույթ-փառատոն՝ նվիրված անկախության օրվան.
- «Արեճա 2007» ասմունքի մրցույթ-փառատոն՝ նվիրված Շուշիի ազատագրմանը և Հայրենական մեծ պատերազմին.
- «Կանգ առ, ակնթարթ» լուսանկարների մրցույթ-ցուցահանդես.



Կարների մրցույթ-ցուցահանդես.

- «ՆԻԿԱ» հասարակական կազմակերպության հետ համատեղ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի տարածաշրջանային աշակերտական 6-րդ և 7-րդ առաջնություն:

Պատանի ստեղծագործողի և հետազոտողի հանրապետական հեռակա դպրոցի և Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել է սովորողների ուսումնական հետաքրքրությունների ամառային հետազոտական-ստեղծագործական ճամբար:



**Առաքելությունն է՝** երիտասարդների հասարակական, քաղաքական ակտիվության բարձրացումն ու նրանց ներգրավվածության ապահովումը համայնքային խնդիրների լուծման գործում:

**Նպատակներն են՝** ակտիվ գործունեություն ծավալել Նոյեմբերյան ֆադաի 15-25 տարեկան երիտասարդության շրջանում՝ մեծածավալ աշխատանքների իրականացման շնորհիվ նշված առաքելության կենսագործման նպատակով:

**Հիմնվել է՝** 2005թ. մայիսին:  
**Նախագահն է՝** Մխիթար Գիշյանը:  
**Հասցեն՝** ՀՀ Տավուշի մարզ, Բ. Նոյեմբերյան, Դպրոցականների փողոց, թիվ 1 միջնակարգ դպրոց

**Հեռախոս՝** (0266) 2-23-35  
(093) 46-62-43

**Էլ. փոստ՝**  
E.G.A@inbox.ru  
noy-ega@mail.ru

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

## ԱՅՍ ՔՆՆԱՇՐՋԱՆՈՒՄ ԲԱՐՁՐ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ 50%-ՈՎ ՆՎԱԶԵՑ

2008 թ. հունիսին կայացած միասնական քննությունների հաջորդեցին նաև կենտրոնացված քննությունները. բուհերի ընդունելության քննաշրջանն արդեն ավարտված է, գնահատականները հրապարակված: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 14-ը՝ բողոքարկման դիմումների ուսումնասիրությունից հետո:

Այսպիսով, ըստ Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքէջի տեղեկացման՝ 13.013 դիմորդից կենտրոնացված քննություններում 18-20 է ստացել 404-ը, 8-ից ցածր է ստացել և քննական հետագա մրցակցությունից դուրս մնացել 1.833-ը: Նախորդ տարվա համեմատ, բարձր միավոր ունեցողների թիվն ավելի քան 50%-ով նվազել է. 2007-ին 18-20 ստացածների թիվը կազմել է 958: Անբավարար ունեցողների թիվը փոքր-ինչ ավելացել է, քանի որ 2007-ին նրանք 1634-ն էին:

Ինչ վերաբերում է 20 միավորին, 2007-2008 թթ. համեմատ կիսով չափ



նվազել է անգլերենի բանավոր քննությունից բարձրագույն միավոր ստացողների թիվը. նախկին 12-ի փոխարեն այժմ ընդամենը 6-ն է: Հայոց պատմության քննությունից 19-20 միավորի չի արժանացել ոչ մի դիմորդ, իսկ 18 միավոր վաստակողների թիվը նվազել է՝ 58-ից հասնելով 38-ի: Ֆիզիկա առարկայից ևս այս տարի 20 միավոր վաստակող չի եղել, իսկ 19 միավոր ստացել է 25

մարդ՝ 2007-ի 66-ի փոխարեն: Քիմիայից, ի տարբերություն նախորդ տարի 19 միավոր ստացած 10 դիմորդների, այս տարի 20 և 19 միավորներ չի ստացել ոչ ոք, 18 միավոր վաստակած դիմորդների թիվը նույնպես նկատելիորեն նվազել է՝ 91-ից հասնելով 20-ի:

Աղբյուրը՝ www.edu.am

## Նոր խոսք՝ երիտասարդության շրջանում

«Չենք երիտասարդական նախաձեռնություն» կենտրոնից տեղեկացրել են, որ վերջերս իրենց կենտրոնին պաշտոնապես անդամագրվել է աշխարհի մեծագույն գրադարանի՝ Վաշինգտոնում գտնվող կոնգրեսի գրադարանի հայկական բաժնի ղեկավար Լևոն Ավդոյանը: Նա

գրադարանի պաշտոնական կայքում տեղադրելու է Չենք-ի առաքելության, նպատակների և գործունեության մասին տեղեկություններ՝ այն սփյուռքում ներկայացնելով որպես հայ երիտասարդության շրջանում նոր խոսք ունեցողի:



## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ՝ ՄԻԱՎ-Ի ՏԱՐԱԾՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

Չեքքերովի իմունային անբավարարության համախտանիշը (ՉԻԱՅ), ցավոք, նոր չէ Զայաստանում, սակայն վիճակագրական վերջին տվյալները ցույց են տալիս, որ արագորեն մեծանում է այդ հիվանդությանը վարակվելու համար խոցելի մարդկանց թիվը: Զայաստանում ՉԻԱՅ-ով վարակվելու վտանգի տակ են արդեն ոչ միայն թմրամոլները, մարմնավաճառները կամ համասեռամուկները, այլև դեռահասները, արտագնա աշխատանքի մեկնողներն ու նրանց կողակիցները:

Լոռու, Շիրակի և Արարատի մարզերից հետո Գեղարքունիքի մարզը ևս հայտնվել է ՄԻԱՎ-ով վարակման աճի վտանգի տակ:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններն ավելի քան 30-ն են, որոնցից մարդկության համար ամենավտանգավորը ՄԻԱՎ-ը կամ ՉԻԱՅ-ն է, որը Զայաստանում առաջին անգամ գրանցվել է 1988 թ., իսկ 1989 թ.՝ մահվան առաջին դեպքը ՉԻԱՅ-ից: Այդուհետև ՄԻԱՎ-ով վարակման դեպքերի թիվը գնալով աճել է: Ըստ 2008 թ. վիճակագրության՝ գրանցված են 582 ՄԻԱՎ-ով և 226՝ ՉԻԱՅ-ով վարակված հիվանդներ. գրեթե կրկնակի, քան երեք տարի առաջ է:

Ըստ մասնագետների՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները խնդիրներ են առաջացնում դեռահասների հետ թե՛ տանը, թե՛ դպրոցում համապատասխան գրույցների և տեղեկատվության պակասի պատճառով: Վերջին հետազոտությունը ցույց է տվել, որ տղաների ընդամենը 8, իսկ աղջիկների՝ 19%-ն է ծնողներից տեղեկանում սեռական հարաբերությունների մասին:

«Ծնողները խուսափում են այդ մասին զրուցել իրենց երեխաների հետ՝ դա թողնելով շրջապատին կամ դպրոցին»,- ասում է «Հանուն ընտանիքի և առողջության» ասոցիացիայի նախագահ Մ. Խաչիկյանը:

Կրթության և գիտության նախարարությունը հանրակրթական 12-ամյա համակարգի անցնելուց հետո նախատեսում է դպրոցներում ներմուծել նոր առարկա՝ լուսաբանելու համար այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ՉԻԱՅ-ի կանխարգելումն ու սեռապես անվտանգ վարքագիծը: Առարկան դասավանդվելու է 8-9-րդ դասարաններում:

Հանրապետությունում արդեն 1400 դպրոցների 800 ուսուցիչներ այդ առարկան վարելու դասընթաց են անցել. այժմ այն փորձնականորեն դասավանդվում է 29 դպրոցներում:

Փորձագետ Պապոյանը համոզված է, որ սեռական դաստիարակության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է առավել ընդգրկուն լինի՝ շատ երիտասարդների ու դեռահասների մատչելի լինելու նպատակով: «Կայուն աշխատանքը հնարավոր կլինի այն դեպքում, եթե ընտանիքը, դպրոցը և երիտասարդական կենտրոնները համագործակցեն»,- ասում է Արսեն Մկրտչյանը՝ Զայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Երիտասարդության վերարտադրողական առողջության նախաձեռնություն» ծրագրի համակարգողը: Մյուս անհրաժեշտ պայմանն այն է, որ երիտասարդները կարողանան ստանալ սեռական առողջության բարձրորակ հսկողություն և խորհրդատվություն: ՄԱԿ-ի Բնակչության և Մանկական հիմնադրամները հանրապետությունում հիմնադրել են երիտասարդների համար նախատեսված առողջապահական մի շարք կենտրոններ՝ բժիշկ Խաչիկյանի ասոցիացիայի օժանդակությամբ: Մինչ այժմ բացվել են 13 կենտրոններ, որոնցից երկուսը՝ Գեղարքունիքի մարզում:

Այժմ մասնագետներն աշխատում են երիտասարդների հետ: Ընդ որում՝ բավականին լուրջ է արտագնա աշխատանքի մեկնողների խնդիրը. նրանք ոչ մի ծրագրում ներգրավված չեն:

Միգրացիոն գործակալությունն արտագնա աշխատանքի մեկնողներին փորձում է ներգրավել՝ օդանավակայաններում գրքույկներ բաշխելով, տեղեկատու ցուցանակների միջոցով և այլն, սակայն ծրագրի գործունեության շրջանակը սահմանափակ է:

Զայաստանի բնակչության 4%-ն ընդգրկված է աշխատանքային միգրացիայի գործընթացում, Գեղարքունիքի մարզում ևս միգրացիոն հոսքը մեծ է: Ներկայումս, սակայն, մարզում որևէ լայնածավալ ծրագիր չի իրականացվում այդ ուղղությամբ:

ԱՐՄԻՆԵ ՂՈՒՎԱՍՅԱՆ

## ՎԱՐՈՐԴԻ, ՆԵՏԻՈՏՆԻ ԵՎ ՊԵՏԱՎՏՈՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԱՆԳՈՒՅՑՈՒՄ

Գաղտնիք չէ, որ Զայաստանի Հանրապետությունում իրավական լիակատար կարգավորման անհրաժեշտություն է զգացվում գրեթե յուրաքանչյուր ոլորտում, առավել ևս հասարակական սպասարկման բնագավառում: Այս առումով բացառություն չեն նաև ներքաղաքային և միջքաղաքային երթևեկությունն ու դրան առնչվող բազմաթիվ-բազմազան երևույթներ, որ կայուն ձևով հաստատվել են մեր իրականության մեջ, բայց որոնք արմատախիլ պետք է արվեն: Գրեթե ամեն օր, ամեն ժամ կարելի է ակնատես լինել երթևեկության կանոնների ամենատարբեր մահավտանգ խախտումների, խախտումների, որոնք կարող են թե՛ օրինազանց համարձակների, թե՛ պարզապես անմեղ մարդկանց կյանք արժեցնալ:

Երթևեկային անցուղարձում օրինախախտումներն այնքան են շատացել մեր առօրյայում, որ բնագրաբար վարժվել և հաշտվել ենք դրանց առկայության հետ: Հաշտվել, իհարկե, կարող ենք միայն ոչ մահացու խախտումների դեպքում, բայց ի՞նչ հանդուժողականության մասին կարող է խոսք լինել, երբ գոհեք են գրանցվում, կյանքեր են ընդհատվում՝ երիտասարդ թե՛ հասուն: Այսօր հավասարապես վտանգված է և՛ վարորդների, և՛ հետիոտն մարդկանց անվտանգությունը, և՛ հնարավոր չէ ասել, թե որ դեպքում է հնարավոր առավել անվտանգ շրջել ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում:

Չմայած ոստիկանության համապատասխան կառույցների վերահսկողությանն ու սպառնալիքներին՝ թանկարժեք, այսպես կոչված «ոսկե» պետհամարանիշերով մեքենաների անխոչընդոտ սրարշավությանը ոչինչ չի կարող սպառնալ: Մայրաքաղաք Երևանում հաճախ ունևոր վարորդների ավտոմեքենաներն այնպիսի արագությամբ են սլանում լուսակիթի կարմիր լույսի ազդանշանից հետո փողոցն անցնելու «բացառիկ» հնարավորություն ստացած խաղաղ անցորդի կողքով, որ անգամ մեքենայի գույնը, ինչ մնաց թե մակնիշը տարբերել հնարավոր չէ:

Թույլատրելի արագության գերազանցման դեպքերի մեծ մասը գրանցվում է մայրուղիներում, ուր հարթ և արագ վարելու համար շատերին հրապուրող ճանապարհ կա: Հրապուրվող վարորդներն էլ առիթը բաց չեն թողնում իրենց շքեղ, հզոր հնարավորություններով օժտված մեքենան ցուցադրելու զարմացողապաշող դիտորդներին՝ բոլորովին չմտախոհվելով հնարավոր վթարի կամ վթարային իրավիճակի մասին: Եվ հենց այսպիսի անհոգ մեքենավարների անզգուշությունն ու ոչ զգոն վիճակը պատճառ են դառնում ահասարսուռ վթարների, մարդկային զոհերի: Այդ մասին են վկայում հեռուստակայաններով հաճախակի հանրությանը ներկայացվող դժբախտ պատահարների մասին լուրերն ու թվային տվյալները:

Վթարային աղետները մայրուղիներում համաճարակ են դառնում, քանզի այդ ճանապարհները պետավտոտեսչության աշխատակիցների հսկողությունից համեմատաբար դուրս են: Իսկ քանի դեռ գիտակցական համապատասխան մակարդակը ցածր է, ճանապարհային վթարների դեմ պայքարն արդյունավետ չի լինի:

Մայրաքաղաք Երևանում մեքենաներն այնքան են շատացել, որ երբեմնի կանոնավոր երթևեկը գրեթե կաթվածահար վիճակում է հայտնվել: Չարմանալին այն է, որ հայ մեծահարուստները ձգտում են հնարավորինս մեծ չափսերի մեքենա ձեռք բերել՝ որպես հեղինակության անհրաժեշտ բաղադրիչ: Բայց, օրինակ, եվրոպական երկրներում ամենատարբեր մակնիշի խոշոր ավտոմեքենաները քիչ են գործածվում. շրջանառության մեջ են հիմնականում փոքր, հարմարավետ մեքենաները, որոնք նաև ընդհանուր երթևեկության մեջ են հարմար: Ցուցադրական մոլուցքը, սակայն, դա թույլ չի տալիս: Եվ մեր մեծահարուստներն ու նրանց «սիրասուն» զավակները շրջում են «տուն-մեքենաներով»՝ խանգարելով երթևեկության օր առ օր դժվարանցանելի դարձող ընթացքին:

Խոսելով վարորդների հաճախադեպ օրինախախտումներից՝

ՀԵՐՄԻՆԵ ԲԱԲՈՒՅԱՆ

## ԴԱՐՁՅԱԼ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ սեփականատերը փորձում է առարկել նկարագրության արձանագրության դեմ, նրան մատնացույց է արվում օրենքը, որը նկարագրության արձանագրությունը բողոքարկելու համար նախատեսել է 10-օրյա ժամկետ՝ սահմանելով նաև, որ գնային առաջարկ ստանալուց հետո կարող է վիճարկվել միայն առաջարկված գինը:

Փաստորեն, չարաշահվում է քաղաքացիների իրավական անտեղյակությամբ պայմանավորված նրանց այն թյուր համոզմունքը, որ, իբր, եթե նկարագրության արձանագրությունն իրենք չեն ստորագրել, ապա գնահատման գործընթաց չի կարող սկսվել, մանավանդ որ խոսքը շինության, հողատարածքի մասին է, որը տեսանելի է նաև դրսից և կապ չունի իր կողմից ստեղծված արգելքների հետ: Հաշվի առնելով այս և մի շարք այլ բացասական

իրողություններ կարծում ենք, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքը հիմնովին վերանայման կարիք ունի:

ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
իրավաբան-փորձագետ  
«Ընդդեմ իրավական կամայականության»  
հասարակական կազմակերպություն

համագործակցության կողմից. Ակնհայտ է, որ նման առաջարկության առկայությամբ օրենքը որևէ ընդհանրություն չունի իրավունքի արդարության հայեցակարգի հետ, ուստի և այն ոչ թե իրավունքի, այլ անիրավության ոլորտում է և մարդու իրավունքների կոպիտ խախտումների ցայտուն օրինակ:



# ՓՈՐՁԱՔՆՆՎԵՑ «ԲՅՈՒՐԱԿՆ» ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԲԱՌԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վերջապես տեղի ունեցավ երկար սպասվածը: ԳՅ Կրթության և գիտության նախարարությունը արժանի ուշադրություն դարձրեց «Բյուրակն» կրթական համալիրի փորձին՝ ուսումնական գործընթացը կոլեկտիվ (համագործակցային) ուսուցման եղանակով կազմակերպելու գործում առկա դրական փորձն ուսումնասիրելու և դրա տարածումը խրախուսելու նպատակով:

ԳՅ ԿԳ նախարարի 2008 թ. թիվ 191-Ա/Ֆ հրամանով ստեղծվել էր առանձին հանձնաժողով՝ «Բյուրակն» կրթական համալիրում մանկավարժական գիտափորձ իրականացնելու մասին: Եվ ահա ստացվել է հանձնաժողովի «Բյուրակն» կրթական համալիրի կրթական գործունեության քառամյա փորձը» փորձագիտական եզրակացությունը, որը ներկայացնում ենք ամբողջությամբ:

## Փորձագիտական եզրակացություն

«Բյուրակն» կրթական համալիրի ստեղծումն ու հետագա գործունեությունը միշտ էլ եղել է կրթական կամակարգի տարբեր, մասնավորապես, Կրթության ազգային ինստիտուտի ուշադրության ոլորտում: ԿԱԻ-ի մասնագետները բազմաթիվ այցեր են կատարել կրթական համալիր, ծանոթացել են նոր մանկավարժական մոտեցումներին, անցկացրել են աշակերտների գիտելիքների և կրթական այլ որակների ստուգումներ: Կազմակերպվել են հատուկ սեմինարներ, որտեղ մի շարք զեկուցումներով հանդես է եկել կոլեկտիվ ուսուցման գաղափարախոս Մանուկ Մկրտչյանը: Կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսությունն ու «Բյուրակն» կրթական համալիրի կրթական գործունեության փորձը ուսումնասիրվել է ամենայն մանրամասնությամբ, հրատարակվել են մի շարք վերլուծական, քննադատական հոդվածներ:

«Բյուրակն» կրթական համալիրում ներդրված կոլեկտիվ ուսուցումը ուսուցման պրոցեսի կազմակերպման նոր ձև է, ուսուցման նոր տեխնոլոգիա՝ իր ուրույն մեթոդիկաներով ու մեթոդական հնարներով: Այն էապես տարբերվում է այսօրվա դպրոցներում գերակայող դաս-դասարանային համակարգից: Կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսները (Վ. Դյաչենկո, Մ. Սկրտչյան և այլք) իրենց տեսական հետազոտություններում բազմակողմանի վերլուծության ու քննադատության են ենթարկել դաս-դասարանային համակարգը և որպես վերջինիս այլընտրանք ներկայացրել ուսուցման կոլեկտիվ եղանակը (ՈւԿԵ):

ՈւԿԵ-ի, որպես ուսուցման նոր տեխնոլոգիայի, գլխավոր առանձնահատկությունը աշակերտների փոխուսուցումն է, ուսուցման պրոցեսի կառուցվածքային բոլոր տարրերը ենթարկված են փոխուսուցման հիմնարար գաղափարին: Այս նորամուծությունը, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները, նկատելիորեն ընդարձակում է ուսումնադաստիարակչական գործունեության հնարավորությունները՝ ձևավորելու համար նոր ժամանակների

պահանջներին համապատասխան մարդ: Ի տարբերություն դաս-դասարանային համակարգի, ուր գերակայում են ուսումնական պարամունքների ճակատային (համադասարանային) ձևերը, բացակայում կամ նվազագույնի է հասցված աշակերտների համագործակցությունն ու փոխօգնությունը, իսկ ուսումնական ողջ պրոցեսը միայնակ կառավարում է ուսուցիչը, կոլեկտիվ ուսուցման պայմաններում աշակերտական կոլեկտիվը նկատելի չափով դառնում է ինքնակառավարվող. սովորողները ներգրավվում են փոխուսուցման ու փոխօգնության ակտիվ գործընթացում, ուսուցիչի հետ համատեղ ձևավորում են իրենց ուսումնական նպատակներն ու իրականացնում դրանք:

ՈւԿԵ-ն յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տալիս իր ուսումնական գործունեության մեջ ընտրել սեփական ուղի և առաջ շարժվել իր ընդունակություններին ու հնարավորություններին համապատասխան տեմպով: Այս պարագայում, հասկանալի է, աշակերտներն ինքնաիրացման ու ինքնադրսևորման լայն հնարավորություններ են ստանում:

Ուսուցման կիրառվող տեխնոլոգիան իր օբյեկտիվ կառուցվածքով համուն է աշակերտին պասիվ հայեցողական վիճակից, ներքաշում նրան ակտիվ ուսումնական գործունեության մեջ, ապահովում սովորողի ֆիզիկական շարժումների ազատությունն ու անհրաժեշտության դեպքում՝ կարճատև հանգստի իրավունքը:



Տարբեր աշակերտների կողմից ուսումնական նյութի յուրացումը տարբեր ժամանակահատվածներում հանգեցնում է, ի վերջո, տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբերի ձևավորմանը: Այսօրինակ խմբերի ուսումնական գործունեության կազմակերպումն ու կառավարումը, թեև տեսական մակարդակով լուծված, բայց գործնականում իրականացնելու տեսանկյունից բարդ ու ծախսատար խնդիր է: Այն ուսուցիչը պահանջում է առարկայական ու, հատկապես, մեթոդական պատրաստվածության մակարդակ:

Կրթական համալիրում աշխատանքների կազմակերպման փորձի մեր մեկնայա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան, իր ուրույն մեթոդական զինանոցով, սկզբունքորեն ի վիճակի է լուծելու ժամանակակից դպրոցի կրթադաստիարակչական խնդիրների ողջ համալիրը, այդ թվում՝ նաև այնպիսի խնդիրներ, որոնք անհնար կամ խիստ դժվար է լուծել դաս-դասարանային ուսուցման պայմաններում: Կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսության ու պրակտիկայի տարածումը ԳՅ կրթօջախներում հեռանկար ունի և կարող է նկատելի չափով բարձրացնել կրթության ընդհանուր որակը:

Հաշվի առնելով վերոնշյալը, կարծում ենք, որ նորարարական այս նախաձեռնությանը անհրաժեշտ է աջակցել, խրախուսել նրա տարածումն ու ներդրումը հանրապետության այլ դպրոցներում:

Այդ նպատակով անհրաժեշտ է՝  
1. Առաջարկել «Բյուրակն» կրթական համալիրի տնօրինությանը մշակել կրթօջախի ուսումնական գործունեության հայեցակարգը:  
2. Կրթօջախին հնարավորություն տալ ԳՅ տարբեր դպրոցներում կազմակերպելու հանդիպումներ, սեմինարներ՝ ուսուցիչներին կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսությանն ու մեթոդիկաներին ծանոթացնելու նպատակով:

3. Առաջարկել դպրոցին երկու առարկաների (հայոց լեզու և մաթեմատիկա) ուսումնական ծրագրերը վերակառուցել տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբերի համար:

Մշակել համապատասխան դիդակտիկ նյութեր, գրել ուսուցչի ձեռնարկներ:

4. Մշակել և ԿԳ նախարարություն ներկայացնել այս ամենի համար անհրաժեշտ իրավական-նորմատիվ փաստաթղթերի փաթեթը:

5. Պարբերաբար ներկայացնել հաշվետվություն աշխատանքների ընթացքի, կրթական արդյունքների ու ծագող խնդիրների մասին:

6. Կազմակերպել գիտագործնական համաժողովներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ դպրոցի յուրաքանչյուր տարվա ուսումնական ձեռքբերումները ներկայացնելու, քննարկելու և ծագած հիմնախնդիրները լուծելու համար:

7. Նշված գործունեության իրականացման համար դպրոցին ցույց տալ խորհրդատվական և ֆինանսական աջակցություն:

Հանձնաժողովի նախագահ՝  
Կրթության ազգային ինստիտուտի տնօրեն **Ն. Ղուկասյան**

Հանձնաժողովի անդամ՝  
ԳՅ հանրակրթության վարչության պետ **Ն. Հովհաննիսյան**

Հանձնաժողովի անդամ՝  
ԳՅ կրթության պետական տեսչության գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ **Գ. Սահակյան**

## Կրթական համալիրի նշանաբանն է՝ «Սովորեցրու, որ սովորես»

**«ԲՅՈՒՐԱԿՆ» ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՈՒՄ**  
- Կրթությունն իրականացվում է պետական ուսումնական ծրագրերին համապատասխան:  
- Ուսուցումն անհատականացված է:  
- Ուսումնական գործընթացի մեջ ակտիվորեն ներգրավված են առանց բացառության բոլոր աշակերտները:  
- Ամեն մի աշակերտ ոչ միայն սովորող է, այլև սովորեցնող:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՆ**  
- Յուրաքանչյուր սովորող ամեն մի թեմայի հատկացնում է այնքան ժամանակ, որքան իրեն անհրաժեշտ է այն լրիվ յուրացնելու համար:  
- Սովորողը հնարավորություն ունի առաջանցիկ տեմպերով ուսումնասիրելու այս կամ այն առարկայական ծրագիրը և ավելի կարճ ժամկետում ավարտել:

լու դրա յուրացումը:  
- Ավագ դպրոցում աշակերտները հնարավորություն ունեն խորացված ծրագրով ուսումնասիրելու բուհական ընդունելության քննական առարկաները:  
- Իրականացվում են լրացուցիչ կրթական ծրագրեր՝ աշակերտների նախափորձություններին համապատասխան:

**ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**  
- Պետական ուսումնական ծրագրով նախատեսված նյութը յուրացվում է դպրոցում. տնային աշխատանքներ չկան:  
- Տնային (ինքնուրույն) աշխատանքները նպատակաուղղված են խթանելու սովորողների ինքնակրթությունը, հետազոտական և ստեղծագործական գործունեությունը:

**ԼԵՁՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ**  
- Ուսուցում հայոց լեզվով:  
- Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում օտար լեզուների խորացված ուսուցմանը:  
- Կիրառվում են զանազան տեխնիկական միջոցներ և հնարներ՝ սովորողների օտար լեզուներով հաղորդակցվելու հմտությունները զարգացնելու նպատակով:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿԱՆ ՏԵՆՆՈՒՈՒԹՅՈՒՆ**  
- Կրթական համալիրն ունի անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն և հարուստ գրադարան:  
- Ուսուցման գործընթացում լայնորեն օգտագործվում են տեխնիկական միջոցները, տեղեկատվական տեխնոլոգիաները:  
- Կրթական համալիրում սովորողները ձեռք են բերում համակարգչային գրագիտություն:

**ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ**  
- Կրթական համալիրում իրականացվում է աշակերտների ինքնակառավարում:  
- Ներքին կյանքը կանոնակարգվում է կանոնադրությամբ:  
- Բարոյափոքեբանական մթնոլորտն առողջ է:

**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԻՄԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՑ ԱՊՐԵՍԻՎԵՐՊ**  
- Երգ, կերպարվեստ, շախմատ, մշակութային ծրագրեր, սպորտային խաղեր, ուխտագնացություններ, բաց դասերի կազմակերպում...

**ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԸ ՀԱՄԱԼՎԱԾ Է ԲԱԶՄԱՓՈՐՉ ԵՎ ՀՄՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԾՆԵՐՈՎ, ՈՎՔԵՐ**  
- ունեն համագործակցային ուսումնական պարամունքների անցկացման մեթոդական հմտություններ և հարուստ փորձ:  
- ներգրավված են ուսուցման համագործակցային եղանակի զարգացման ստեղծագործական աշխատանքների մեջ:

**ՀԱՍՏԱՎՈՐՇԱԿՑՈՒՄ ԵՆՔ...**  
- ԳՅ Կրթության ազգային ինստիտուտ  
- «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա

«Բյուրակն» կրթական համալիրի ուսումնական խմբեր են գործում նաև Վանաձոր (2006 թվականից) և Սևան (2007 թվականից) քաղաքներում:



# ՄՇԱԿՈՒՅԹ

## ԻՄ ՆԱՄԼԵՏԻ ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼԸ

...Մարդ կարող է և՛ ժպտալ, և՛ սրիկա լինել...

Ժամանակն շտապում է. այն միշտ էլ «քրտնաթոր աճապարանքի» մեջ է եղել: Ժամանակներն ստեղծում են իրենց համլետներին, բայց ավելի անհանգստանում են նրանց համար, քան ուրախանում:

Յուրաքանչյուրիս մեջ մի Զամլետ կա, որը մեզ ստիպում է լինել, բայց նրան մերժելով՝ դառնում ենք գորշ առօրյայի գունատ ստրուկը:

Զամլետները նաև խեղճանում են աստիճանաբար բանտարկվելով սեփական հոգիներում: Զինված ժամանակներն ստեղծում են իրենց համլետներին՝ մոռանալով ստեղծել նաև նրանց հավատարիմ... հորաջիտներին:

Երբ նրա մեջ ապստամբում են կամքն ու արթնացած գիտակցությունը, նա մերկացած հոգով գնում է դառը, դաժան ճշմարտությանն ընդառաջ՝ հոր ուրվականին խնդրելով իրեն չթողնել, որ փոթորկվի անգիտությունից: Ուրվականը, որպես որդեսեր հայր, գիտի, որ ամեն հայտնությունն էլ, որ մարդու ոյրաբախտ ակամքի համար մատչելի է, մանավանդ Զամլետի ցինջ երաժշտությամբ թաթախված ներաշխարհի համար, որը կարող է միանգամից խաթարվել սարսափելի ճշմարտությունն իմանալուց հետո: Բացի այդ՝ չէ՞ որ մահացածներին էլ է արգելվում... անզաղտնապահ լինել:

Զամլետը մենախոսում է իր աղճատված ներաշխարհի առաջ, և քանի որ ցղերն ու հոգին աղաղակում են՝ պատրաստ մի ակնթարթում ծերանալու, նա ճգնում է կենտրոնանալ: Աշխարհում չքանում է ներդաշնակության մեղեդին՝ վերջին հնչյունը խեղդելուց հետո: Իրականությունը Զամլետի համար անմիջապես վերածվում է «խելախեղված գնդակի», խղճուկ են թվում հիշողության մեջ թափառող «փուչ ու աննշան պատահարները», գրքային բոլոր ասացվածքները, անցյալի տպավորությունները:

Ավա՞ղ, ավելի ստոր մյուսեր էլ են իշխում Զամլետին, և նա որոշում է. «Տեսորակս, պետք է հուշագրեն այստեղ, թե մարդ կարող է և՛ ժպտալ, և՛ սրիկա լինել»: Ազնիվ փիլիսոփա անհատը կորցնում է հավատալու շնորհը. նրա մեջ սողոսկում է ամենագոր կասկածը, սրամիտ խոսքի մեջ նկատվում է դառը ծաղր: Իմացության մեջ բացվում է նոր ու սարսափելի մի աշխարհ:

Ժամանակն ապացուցել է, որ շատ անսպասելի փորձություններ են թաքնված կյանքի փակ և բաց դռների ետևում, որի մասին փիլիսոփայությունը երբևիցե չի էլ երազել: Բազմանում են հարցերը, խճճվում, այլևս անհնար է դրանց պատասխանները գտնել: Զամլետն զգում է, որ ճակատագիրը սխալվել է մարդկային կատակերգության գլխավոր դերակատարին ընտրելիս: Նա հասկանում է, որ ինքը հեռու է ստորություններ բնութագրելուց և մեկնաբանելուց, վրեժ լուծելու վճռակնությունը վեր է անգամ իր երևակայությունից: Կյանքի պիղծ գույները չեն համապատասխանում իր ներկայանակին, բայց պետք է հարմարվել: Զամլետը դուրս է նետվում իր երկրում, ուզում է իր մեջ նոր մարդ արարել՝ անծանոթ դերը խաղալու համար: Զայտնվում է հարցերի հարցը. «Ժամանակն իր շավիղից դուրս է սայթաքել, օ՛հ, բախտ իմ դժխեն, ինչու՞ ծնվեցի, որ հենց ես ուղղեմ»:

Ուղղելու համար, սակայն, ճշտել է հարկավոր: Զամլետը պարտադրված ընդունում է անսովոր դերը... Նա ուզում է բոլորին և յուրաքանչյուրին նոր լույսի մեջ տեսնել և իրենց իսկական տեղը դնել... Ասում է. «Այսօրվա օրը պարկեշտ մարդ լինել՝ նշանակում է տասը հազարից մեկը լինել... Կեղծ է նաև արեգակի շաշլ բարությունը... Գրքերի կախարդական աշխարհն արդեն դառնում է բառեր, բառեր, բառեր... Աշխարհն էլ հսկայական բանտի տպավորություն է թողնում»: Ռուբեն Սևակի խոսքերով՝ «իրերու գեղեցկությունը» ձևափոխվում է «գարշ ու ժահահոտ գոլորշիների մի համադրության»: Զամլետը երազում է ձուլվել բնությանը, որի հետ ներդաշնակ գոյատևելը մարդկության պատմության բոլոր ժամանակներում եղել է ամենամահիրական, բայց և ամենացանկալի ձգտումը, որը բնորոշ է նաև մեր օրերին: «Հողի գերագույն գտնվածքը» մարդը, այլևս չի հիացնում Զամլետին...

Ողբերգությունը հոգուց սողոսկում է մտքերի աշխարհը, և անկարելի է դառնում շնչելը: Տրամաբանությունը կորցնում է իր հստակությունը... Զամլետն զգում է իր գործելու անգորությունը: Նրա երազկոտ էությունը հակադրվում է ժամանակի և մարդկանց նկարագրին: Զկարողանալով անտարբեր լինել խոհանոությունը հուշում է, որ անհնար է փոխել իրադրությունը: Նա ստիպված է բարոյապես ճնշել հարազատներին: Զեր կարող այլ կերպ պայքարել ստորության, դաժանության ու կեղծիքի մեջ թաթախված շրջապատի դեմ: Նա թափանցում է լինել-չլինելու առեղծվածային հարցերի ելույթում մեջ:

Մեր օրերում էլ շատ ցավազար «ինչուներ» կան: Կյանքի փակ և բաց դռների առջև տարակուսում ենք՝ որ դուռը փակել, որը բացել... Հոգու ինչպիսի կրակներ պետք է անթեղված լինեն մարդու մեջ, որ նա կարողանա միաժամանակ և՛ դժգոհությունից պայթել, և՛ հուսալ ու երազել:

Մարդու կամքն էլ է երկբայության մեջ, այն ստիպում է տանել «ավելի այն չարիքները, որ այստեղ ունենք, քան թե սավառնել դեպի նոր ցավեր, որոնց անգետ ենք»:

«Ով կորցնելու բան ունի, նա ստրուկ է ինչ-որ մտքի, նախապաշարմունքի»: Մարդը ոչ միայն խոնարհվում է բնության առաջ, այլև օր օրի դալկանում է պատասխան պահանջող հարցերի բեռան ներքո: Լինելու համար անհատն ստիպված է բազմաթիվ դռներ փակել իր հոգում, կապել գորշ առօրյային տեսանելի և անտեսանելի շղթաներով:

Մարդը տարուբերվում է երկնքի և երկրի միջև: Նա ոչ իրեշտակ է, ոչ էլ սատանա: Նրա մտածողությունն անգոր է մեկնաբանելու իր մեջ շարժվող մութ հոսանքները: Զարմանալի չէ, որ Զամլետն Օֆելյային ժառանգություն է թողնում այս դաժան պատվիրան-անեծքը. «Եղի՛ր զգաստ, ինչպես սառույց, մաքուր, ինչպես ձյուն, դարձյալ գերծ չես մնա զրպարտությունից...»: Ոչ մի անհատ, որքան էլ հզոր լինի մտքով ու երևակայությամբ, չի կարող ուղղել իրականության աղճատված դիմագիծը, եթե նույնիսկ դրա համար է ծնվել... Զամլետն ինքն իրենից դուրս նետված զսպանակ էր, համաճարեղ խելագար, ով մտածում էր բարձրաձայն և աչ ու ձախ շարտում և՛ ականջների, և՛ սրտերի համար սարսափելի ճշմարտությունները:

Զամլետի մեջ խոսում է նաև արվեստագետը: Նա ու ժամանակը կարծես դառնում են երկկողմանի հայելի-էկրան...

Անկարելի է չսիրել նրան, չտառապել նրա հետ: Զամլետի ողբերգությունն ամուսնու չուճի, այն հարատև է: Նա չկարողացավ շնչել ժամանակի օդով, փոխել իր էությունը: Նա վաղ թափանցեց կյանքի էության մեջ, իմացավ, թե որքան հոյակապ ստեղծագործություն է Աստուծո հզոր ձեռքերով արարված մարդը, դրա համար էլ չի կարողանում հաշտվել իրականության հետ, հավատարիմ է մնում ինքն իրեն, իր տառապանքին, հոր ուրվականին: Նա, որ կարող էր «մի ընկույզի կեղևի մեջ տեղավորվել և բախտավոր զգալ», հանկարծ համոզվում է, որ իրականության մեջ հարթանակում է միայն փաստերի հրեշավոր լեզուն, որն անմեկնաբանելի, անթարգմանելի է իր նմանների համար:

Հովհաննես Թումանյանը 1910 թ. գրած «Զամլետի չարչարանքի շաբաթը Թիֆլիսում» հոդվածի մեջ շեշտում է «էն առաջին ինտելիգենտի» հոգու ազնվությունը, արքայազնի վեհությունը, փիլիսոփայի խորությունը, համաճարեղ նրբամտությունն ու վշտի ծանրությունը (Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, 1985, էջ 270):

Զամլետն ընտրեց և այսօր էլ ընտրում է ոչ ոյրորին, այլ ճշմարիտ ճանապարհը...

ՍՈՐԻ ԹԱՌՈՅԱՆ

## ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՈՒ ՀԱՋԱՐԱՎՈՐ «ՔԱՐԵ ՏԱՇՏԱԿՆԵՐԻ» ԱՌԵՂԾՎԱԾԸ...

Լոռու մարզի Գոգարան գյուղը և նրա շրջակայքը հայտնի է հնագույն քաղաքակրթության հարուստ ու բացառիկ մշակութային արժեքներով ու գտածոներով:

Կարծիք կա անգամ, որ հնագույն այս բնակատեղիում է եղել տարածաշրջանի ամենաընդարձակ քաղաքներից մեկը...

Թե ինչքան են անցյալում կողոպտվել, գանձախուզվել ու պեղվել տեղի հնագույն բնակավայրերն ու դամբարանները, դժվար է ասել, սակայն անցյալ դարի 2-րդ կեսից սկսած և մինչ այժմ պեղումներից հայտնաբերված թանկարժեք ու հնագույն գտածո-մնուշները դրանց վառ ապացույցներն են:

ԽՍՀՄ շրջանում մեր մշակութային արժեքների թվագրումն անհարկի ու միտումնավոր հետաձգելու և ավելի ուշ շրջանի վերագրելու համատարած մոտեցումն անտեսել էր եկեղեցու բակում (4-5-րդ դար թվագրվող) դեռևս պահպանված հնագույն 2 քառակող կոթողների առկայությունը, և եկեղեցին թվագրել են 17, 18-20-րդ դար՝ չկապելով այն տարածքի հնագույն մշակութային արժեքների հետ (գուցե «հիմք» են ընդունել միայն վերջին մի քանի թաղումներն ու վերականգնման վերջին շրջանը...):

Քանի որ քառակող կոթողների պատմագրանները 4-6 են, ենթադրվում է, որ դրանք տեղադրված են եղել միանավ բազիլիկ եկեղեցու 4 կողմերում (որպես «սրբավայրը հսկող սահմանապահներ...»):

Գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու (որոշ պատմագիրների մոտ հիշատակվել է որպես տաճար...) վերականգնումից հետո՝ մեր հանդիպման ժամանակ, ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը (եկեղեցու և քառակող կոթողներից մեկի վերականգնման նախագծի հեղինակը) նշեց, որ վերականգնման ընթացքում հիմքերի բացվելուց հետո պարզ դարձավ, որ եկեղեցին վերականգնված է 4-րդ դարի գետնախարհիսխների ու հիմքերի վրա:

Իսկ եթե դրան ավելացնենք նույն ժամանակաշրջանին պատկանող քա-



ռակող կոթողների խմբի առկայությունը և եկեղեցուն կից գերեզմանոցում գտնված խոյակերպ հնագույն տապանն ու շրջակա տարածքի նախաքրիստոնեական բազմաթիվ դամբարանները, պարզ է դառնում, որ գործ ունենք վաղնջական շրջանի հնավայրի հետ:

Վերջին շրջանում հնագույն տարածքի պեղման աշխատանքներն իրականացնում են ճանաչված հնագետներ Արամ Քալանթարյանը, Գագիկ Սարգսյանը (ՀՀ Հնագիտության ինստիտուտի նախկին ղեկավարն ու տեղակալը), Նորա Ենգիբարյանը և գյուղի երիտասարդներից կազմված աշխատանքային աջակցող խումբը:

Հնագետները թեև վաղուց են ծանոթ այս հնավայրին, սակայն մեծ սիրով, եռանդով ու անակնկալի սպասումով են վարում պեղման աշխատանքների ընթացքը...

Իսկ համայնքին հարակից «Սագյառ» կղզվող ամրոցի 2007 թ. հետազոտությունների ու պեղումների արդյունքները ցուցանում են, որ գործ ունենք մի յուրօրինակ հնավայրի հետ...



# Հոգեւոր

## ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԶԱՏԱԳՈՎ ՍՐԲԱԶԱՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Պետականության կորստից հետո երբեմն կաթողիկոսներն ու հոգևոր հայրերը Հայաստանում իշխանություն հաստատած տերությունների առջև ճանաչվել են որպես ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներ՝ պատասխանատվություն կրելով իրենց հովվապետությանը հանձնված համայնքի համար, իրավասու լինելով միջամտել համայնքի անդամների կյանքին առնչվող հարցերին: Քիչ են այն գործիչները, ովքեր քաղաքական հեռատեսությամբ, անձնվիրությամբ և գործիմացությամբ կարողացել են պաշտպանել ազգային շահերը: Նրանցից է Վազգեն Ա հայրապետը, ում 100-ամյա հոբելյանն այս օրերին նշում է համայն հայ ժողովուրդը:

1908 թ. սեպտեմբերի 20-ին Ռուսիայի Բուխարեստ քաղաքում, արհեստավորի ընտանիքում ծնվում է Լևոն-Կարապետ Պալճյանը: 1913 թ. Պալճյան ընտանիքը տեղափոխվում է Կ. Պոլիս, հաջորդ տարի վերադառնում, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով 1916 թ. տեղափոխվում Օդեսա: Միայն 1919 թ. է նրանց հաջողվում վերադառնալ Ռուսիայից, որտեղ պատանի Կարապետն ստանում է միջնակարգ և բարձրագույն կրթություն նախ հայկական, ապա՝ գերմանական հաստատություններում: Նրա առաջին ուսուցիչը, սակայն, մայրն էր՝ Սիրանուշը, ով իր գավալին օտարության մեջ կրթել է մայրենի լեզվի, ազգային սրբությունների և հայ եկեղեցու հավատի նկատմամբ նվիրվածության ոգով:

1929 թ. Բուխարեստի հայկական վարժարանում վարելով ուսուցչի օգնականի և քարտուղարի պաշտոն միաժամանակ շարունակում է ուսումը, իսկ 1831 թ. ընդունվում է Բուխարեստի պետականակարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետ:

Երբ 1942 թ. իր մահկանացուն է կնքում Ռուսիայի հայ եկեղեցական համայնքի առաջնորդը, ռուսիական պատերազմի Կարապետին է ընտրում որպես առաջնորդ. նա ծեռնադրվում է քահանայ վերամվանվելով ԵՊ Կազգեն միաժամանակ ստանալով նաև վարդապետական աստիճան:

Այդ պահից Վազգեն վարդապետի համար սկսվում է կյանքի նոր շրջան. նրա գործունեության հիմնական ուղղություն են դառնում քարոզչությունն ու հովվությունը:

1954 թ. եպիսկոպոսաց և Գերագույն հոգևոր խորհրդի նիստում Վազգեն վարդապետն ընտրվում է խորհրդի անդամ: Այնուհետև հայոց կաթողիկոսի ընտրությունը պատշաճ կազմակերպելու նպատակով էջմիածնում կազմվում է համազգային կենտրոնական ընտրական հանձնաժողով: Գերագույն հոգևոր խորհուրդը նույն օրը նստակ է հղում բոլոր թեմերին՝ տեղեկացնելով նոր կաթողիկոսի ընտրության օրվա մասին և հրավիրելով մասնակցել ընտրությանը: 1955 թ. կատարվում է կաթողիկոսական ընտրությունը, և Լուսավորչի արժույթն է Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Շուտով նա սկսում է այցելություններ կատարել սփյուռքահայ օջախներ՝ հայ եկեղեցական կյանքին ծանոթանալու համար: Վեհափառ հայրը հրավիրում է նաև յոթ ճարտարապետներից կազմված հանձնաժողով՝ ըստ հնարավորին հայոց սրբավայրերը

վերանորոգելու մտահոգությամբ: Վերանորոգական աշխատանքներ են կատարվում Մայրավանք, Հռիփսիմե, Շողակաթ, Օշական, Տաթև, Հաղարծին և այլ սրբավայրերում:

Ընդամենը երեք տարի անց Վազգեն Ա-ն, ում օտարերկրյա հայ մամուլը կոչել էր «ամենայն հայոց անծանոթ», դառնում է հայ ժողովրդի խորհրդանիշը, իսկ Գերագույն հոգևոր խորհուրդը հետևյալ կերպ է նրան բնութագրում. «Երջանիկ է Հայաստանյայց եկեղեցին, համայն հայ ժողովուրդը, քանզի ունի մի նոր Առաջնորդ, մի քաջ Հոգևոր, որն արիաքար իր ուսերի վրա առավ հովվապետի ծանր լուծը և կրում է այն՝ խոր հավատով դեպի իր եկեղեցին ու նրա ապագան»:

1962 թ. Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ հայոց եկեղեցին դառնում է եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ:

Նա իր գահակալության 39 տարիների ընթացքում կիսեց իր հոտին բաժին ընկած դժվարությունները, հաջողություններն ու հաղթանակները: Վեհափառ հոր նախաձեռնությամբ 1965 թ. մայր եկեղեցու բակում կառուցվում է եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հայաստանյան անդրանիկ հուշակոթողը, որին հաջորդում է Ծիծեռնակաբերդի կառուցումը:

Վեհափառն անմասն չի մնում նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության անրապնդման սուրբ ու նվիրական գործին:

Վազգեն Ա-ն իր կենդանության օրոք իրավամբ վայելեց ժողովրդականություն, հեղինակություն, ժողովրդի սերն ու հարգանքը: 1991 թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից նա ընտրվում է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, իսկ 1994 թ. հուլիսի 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով, ի զմահատունմ ազգային և հոգևոր արժեքների պահպանության և զարգացման գործում ցուցաբերած անձնուրաց նվիրման և բացառիկ ծառայության, առաջինը նրան է շնորհվում «Հայաստանի ազգային հերոս»-ի բարձրագույն կոչումն ու «Հայրենիք»-ի շքանշանը: Նա է դառնում հայոց նորանկախ պետության քաղաքացու առաջին անձնագրի կրողը:

1994 թ. օգոստոսի 18-ին՝ առավոտյան 7.15-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա ամենայն հայոց կաթողիկոսը հոգին ավանդում է առ Աստված և միանում եկեղեցու սուրբ հայրապետների դասին:

Մշտնջենական լույս վեհափառի հիշատակին: Ամեն: Ցանկանում են խոսքս ամփոփել վեհափառ հոր մի քանի մտորումներով:

- Մեծ է արվեստի ույժը: Օ՛, եթե մարդկության և պետությանց ղեկավարները դաստիարակված ըլլային արվեստի բարձր հասկացողությամբ, գուցե մեր ճակատագիրն ալ տարբեր ըլլար:
- Հայեր, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, արքնացեք և ուխտեցեք մնալ հավատարիմ ազատն Հայկ նահապետին և մեր հոգիների Լուսավորչին ամենասուրբ:

ԽՈՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Մարդու իրավունքների գրադարանի ընթերցողն արդեն կարող է ծանոթանալ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «ՀԱՍԿ» պաշտոնական ամսագրի հեթեմական՝ 2008 թ. 5-րդ համարին, որում հայրաբանական, մեկնաբանական, աստվածաբանական, պատմա-ուսումնասիրական, երիտասարդական և այլ խորագրերի ներքո գեղատեղված են Սարգիս Կիրակոսյանի «Սարդարապատյան հավատարմությանը», Հակոբ արք. Գլընճյանի «Քրիստոնեական վախճանաբանության մի քանի հարցեր», Վաղինակ վրդ. Մելոյանի «Ազգի մշակներուն վարձքը», դոկտ. Գերգ խրլոպյանի «Ընկերությունը և անհատը», Գրիգոր Ծ. վրդ. Զիֆթյանի «Հոգիի աքրությունը սկսելից առաջ» և այլ հոգևորականների ու մտավորականների հեղինակած և թարգմանած մի շարք ուշագրավ հոդվածներ և մեկնություններ:

Համարում տեղ են գտել նաև միջեկեղեցական, դարեվանքի կյանքն ու կաթողիկոսարանի իրադարձությունները լուսաբանող, ինչպես նաև ամփոփ և բազմազան լրատվական այլ նյութեր, որոնցից երկուսը ներկայացնում ենք ստորև:

Վերջերս Քաթարի մայրաքաղաք Տոհայում կայացել է

Կրոնների երկխոսություն 6-րդ միջազգային համագումարը՝ «Կրոնական արժեքները՝ խաղաղության և հարգալից կյանքի հեռանկարով» թեմայով, որին մասնակցել է ավելի քան 200 մարդ 30 երկրներից: Համագումարին մասնակցելու համար հրավիրվել էր նաև Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունը՝ հանձին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Գերգ. Տ. Սեպուհ արք. Սարգսյանի: Մասնակիցները քննարկեցին խաղաղությանը, փոխադարձ հարգանքին, մարդու իրավունքներին առնչվող բազմազան հարցեր:

\*\*\*

Հայ եկեղեցու համալսարանական ուսանողների միության նախաձեռնությամբ կազմակերպվել է դասախոսություն «Ոսկեդարը և հայկական ինքնությունը» թեմայով: Դասախոսություն կարդացող մտավորական և մանկավարժ Գրիգոր Շահինյանն անդրադարձել է 5-րդ դարի և հարակից պատմաշրջանի կարևորագույն անցքերին՝ քրիստոնեության որպես պետական կրոնի հռչակում, հայ գրերի գյուտ և այլն, որոնք տեղի են ունեցել ի պահպանումն հայոց ինքնության: Նա շեշտել է, որ մեր օրերում ևս շարունակվում է պայքարը հանուն ինքնության պահպանման:

**ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆԱՑՈՒՅՑ**  
**Օգոստոսի 16 - Տան Շողակաթի**  
**Օգոստոսի 17 - Վերափոխումն Սուրբ Աստվածածնի**

### ՀԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

Մարդը չի կարող քրիստոնյա լինել, եթե չի հավատում հավերժական կյանքին: Ուրեմն նա չի հավատում նաև Ավետարանին՝ Քրիստոսի հարությանը, և բաց աչքերով սպասում է իր մահվանը, որն, իր կարծիքով, անդարձ կործանում է: «Եթե այդպես է, և եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել Քրիստոսի վրա, մարդկանց մեջ ամենից խղճալին ենք», - գրում է Պողոս առաքյալը (Կորնթ. 15:19):

Այսօր շատերի համար քրիստոնեական մեծագույն Հարության տոնը սահմանափակվում է Ձատկի կարմիր ձվով, փլավով ու ձկնով: Մինչդեռ իրականում այն իրաշափառ, կենսատու և երջանկաշնորհ իրողություն է, եթե հավատում ես հարությանը...

Այս օրերի աստվածաշնչական ճաշու ընթերցվածներն ընդգրկում են հարությանը վերաբերող իրաշափ հատվածներ, թեև ողջ Ավետարանն ինքն է իրաշափ:

Ինչևէ, որոշեցինք այդ հատվածներից տպագրել ընթերցողի համար օգտաշահ համարելով: Այդ իսկ հույսով ու առաքելությամբ է գրել կորնթացիներին ուղղված իր առաջին նամակը մեծ առաքյալը:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

15 Եղբայրներ, յիշեցնեմ ձեզ իմ Աւետարանը, որը քարոզեցի ձեզ, եւ ընդունեցիք, եւ որի մէջ հաստատ էք մնում. 2 նրանով կը փրկուէք էլ, եթէ ամուր պահէք այն խօսքերը, որ քարոզեցի ձեզ. այլապէս ի գուր հաւատացած կը լինէք. 3 որովհետեւ ես ձեզ աւանդեցի նախ այն, ինչը ես ինքս ընդունեցի. թէ՛ Քրիստոս մեռաւ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի 4 եւ թէ՛ թաղուէք եւ թէ՛ յարութիւն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի 5 եւ երեսաց Կեփաւին եւ ապա՝ Տաւսներկուսին. 6 ապա երեսաց միանգամից աւելի քան հինգ հարիւր եղբայրների, որոնցից շատերը կան մինչեւ այժմ. ոմանք էլ մնջեցեալ եղան: 7 եւ ապա երեսաց Յոկոբոսին, ապա՝ բոլոր առաքեալներին: 8 Ամենից յետոյ երեսաց եւ ինձ՝ անարգիս, 9 որովհետեւ ես իսկ եմ առաքեալների տրուպը. ես որ առաքեալ կոչուելու արժանի իսկ չեմ, քանի որ հալածեցի Աստծու եկեղեցին: 10 Բայց Աստծու շնորհով եմ, ինչ ոչ եմ, եւ իմ մէջ եղած նրա շնորհները իզուր չանցան, այլ նրանցից բոլորից աւելի աշխատեցի. բայց ոչ թէ ես, այլ Աստծու շնորհը, որ ինձ հետ էր: 11 Արդ, թէ՛ ես եւ թէ՛ նրանք այսպէս քարոզեցինք, եւ դուք այսպէս հաւատացիք: 12 Իսկ եթէ քարոզում է, թէ Քրիստոս մեռելներից յարութիւն է առել, ձեզնից ոմանք ինչպէ՛ս են ասում, թէ մեռելների յարութիւն չկայ: 13 Եթէ մեռելների յարութիւն չկայ, ապա եւ Քրիստոս յարութիւն չի առել: 14 եւ եթէ Քրիստոս յարութիւն չի առել, ի գուր է մեր քարոզութիւնը, ի գուր է եւ ձեր հաւատը: 15 եւ Աստծու սուտ վկաները եղած կը լինենք, քանի որ Աստծու մասին վկայեցինք, թէ յարութիւն տուցէ Քրիստոսին. արդարեւ, եթէ յարութիւն չառնէին մեռելները, նրան յարութիւն չէր տայ: 16 Իսկ եթէ մեռելները յարութիւն չեն առնում, ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել: 17 եւ եթէ Քրիստոս յարութիւն չի առել, ի գուր է ձեր հաւատը. եւ տակաւին նոյն մեղքերի մէջ էք: 18 Իսկ արդ, նրանք, որ մնջեցին ի Քրիստոս, կորա՞ն արդեօք: 19 Եթէ միայն այս կենսացի համար ենք յոյս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՎԱԾՆԵՐ

**Օգոստոսի 9-20**

9	–	Շք. Եփեսոսի Աք ժողովոյն երկու հարիւր հայրապետացն (431 թ.): Եզկ 3.16-19, Բ Տմ 1.6-14, Ղկ 10.16-20
10	–	Կիր. Է. կիր. գկնի Վարդավառի: Բարեկենդան Աք Աստուածածնի Պահոց: Ես 7.1-9, Ա Կր 13.11-14.5, Մր 2.1-12
11	–	Բշ. Ա. օր Աստուածածնի Պահոց: Ա Կր 14.18-25, Մր 2.13-30
12	–	Գշ. Բ. օր Աստուածածնի Պահոց: Ա Կր 14.26-40, Մր 2.23-3.5
13	–	Ղշ. Գ. օր Աստուածածնի Պահոց: Ա Կր 15.20-33, Մր 3.6-16
14	–	Եշ. Դ. օր Աստուածածնի Պահոց: Ա Կր 15.34-49, Մր 3.20-30
15	–	Ուր. Ե. օր Աստուածածնի Պահոց: Ա Կր 15.50-57, Մր 3.31-4.8
16	–	Շք. Տօն Շողակաթին Աք. Էջմիածնի ըստ տեսլեան արքոյն Գրիգորի Լուսաւորչին: Առ 3.19-26, Եզկ 40.2-10, Ա Պտ 2.1-10, Ստ 16.13-19
17	–	Կիր. ՎԵՐԱՓՈՒՄՆԻՄՆ ՍԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԵՐ: Երգ 4.9-15, Ես 7.10-16, Գղ 3.29-4.7, Ղկ 2.1-7
18	–	Բշ. Բ. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց: Առ 11.30-12.4, Զք 2.10-13, Բ Կր 6.16-7.1, Ղկ 1.39-56
19	–	Գշ. Գ. օր Վերափոխման: Երգ 6.3-8, Մր 3.1-2, Գղ 3.24-29, Ղկ 2.1-7
20	–	Ղշ. Դ. օր Վերափոխման: Պահոց: Երգ 4.9-15, 8.14, Ես 7.10-16, Գղ 3.29-4.7, Ղկ 2.1-7



### ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-9-Ը ԿԿԱՅԱՆԱ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2005 թ. Բերգենի հանդիպման ժամանակ Եվրոպական բարձրագույն կրթության տարածաշրջանի (ԵԲԿՏ) կրթության նախարարներն ընդունեցին ԵԲԿՏ-ի որակավորումների ընդհանուր շրջանակը պարտավորվելով մինչև 2010 թ. մշակել որակավորումների ազգային շրջանակների փոխանակման գործընթացը: 2007 թ. Լոնդոնում Բոլոնիայի նախարարական հանդիպման ժամանակ նախարարները վերահաստատեցին իրենց ստանձնած պարտավորությունները՝ Եվրախորհրդին խնդրելով համակարգել որակավորումների ազգային համակարգերի զարգացման փորձի փոխանակման գործընթացը:

Որի 8-9-ը Ծաղկաձորում նախատեսվում է անցկացնել խորհրդաժողով՝ երկու փուլով: Առաջին օրը կքննարկվի որակավորումների զարգացման քաղաքական կողմը, երկրորդ օրը ելույթ կունենան որակավորումների ազգային շրջանակներում ներգրավված պաշտոնյաները, դասախոսները, ուսանողները ու շահագրգիռ այլ անձինք: Մեծ ուշադրություն կդարձվի որակավորումների ազգային շրջանակների զարգացման առանձնահատկություններին:

### ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ ԳԱԱ և «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ի միջև ստորագրված հուշագրի շրջանակներում ստեղծվել է Աբել Ադանբեկյանի անվան Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոց: Դպրոցի ուղղվածությունն իրենց մասնագիտական աճով շահագրգռված գործարար-ղեկավարների, գործարար-վերլուծաբանների և բարձրակարգ խորհրդակցանքների պատրաստումն է:

«Ներդրումներ մարդկային կապիտալում» սա «Ռադվան տեխնոլոգիա»-ի հիմնական սկզբունքներից մեկն է: Ընկերությունն աշխատանքի է հրավիրում կորպորատիվ կառավարման քաղաքականությանը համապատասխանող կադրերի: Այս նպատակով «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ն կազմակերպում է ներդրումային նախագծերի մշակողների մրցույթ, որտեղ խոշոր մրցանակների հետ միասին (1-ին տեղ՝ 1 մլն 500 հազար դրամ, 2-րդ տեղ՝ 800 հազար դրամ, 3-րդ տեղ՝ 600 հազար դրամ) լավագույն մասնակիցները կապահովվեն բարձր աշխատավարձ ունեցող աշխատանքով:

ՀՀ ԳԱԱ լրատվական ծառայություն

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



«Բյուրակն» կրթահամալիրը հայտարարում է ընդունելություն Երևանի, Վանաձորի և Սևանի ուսումնական խմբերում:

Կրթահամալիրը հավատարմագրված է ՀՀ ԿԳՆ կողմից (լիցենզիաներ թիվ 320, 321, 945):

#### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄՎԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է անհատական ուսումնական ծրագիր՝ պետական չափորոշիչներին համապատասխան:
- Աշակերտը սովորում և սովորեցնում է: Ուսուցումը կազմակերպվում է անհատական, խմբային և փոփոխական զույգերով:
- Ուսումնական գործընթացը բաժանված է դասաժամերի, նյութի յուրացման համար չկա ժամանակի սահմանափակում:
- Ուսուցումը երկարորոշ է՝ 9.00-16.00-ը (սնվելու երկու ընդմիջումներով):
- Աշակերտների փոխադրումը տուն-դպրոց-տուն կազմակերպվում է կրթահամալիրի միջոցներով:
- Ուսուցումը վճարովի է. ծնողների կողմից ուսման վճարից բացի որևէ հավելյալ վճարում չի կատարվում, ներառյալ՝ գրեական պիտույքների, դասագրքերի, ուստագնացությունների և այլ ծախսերը:
- Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով:

#### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ.

**Երևանի «Բյուրակն» կրթահամալիրում ընդունելություն է կատարվում հանրակրթական դպրոցի բոլոր տարիքային խմբերում:**  
Հասցե՝ ք. Երևան, Պարույր Սևակի 11  
Հեռ./հեռապատճեն՝ (0 10) 28-40-80, (0 91) 28-40-80

**«Բյուրակն» կրթահամալիրի Վանաձորի ուսումնական խումբ կարող են ընդունվել տարրական դպրոցի 6-9 տարեկան երեխաները:**  
Հասցե՝ ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2  
Հեռ.՝ (0 322) 2-29-67  
Հեռապատճեն՝ (0 322) 4-47-81  
Էլ. փոստ՝ [acrpc@acrpc.am](mailto:acrpc@acrpc.am)  
Կայքէջ՝ [www.acrpc.am](http://www.acrpc.am)

**«Բյուրակն» կրթահամալիրի Սևանի ուսումնական խումբ կարող են ընդունվել տարրական դպրոցի 6-9 տարեկան երեխաները:**  
Հասցե՝ ք. Սևան, Աբովյան 140  
Հեռ.՝ (0 261) 6-02-05, (0 93) 33-41-12

← Էջ 6

## ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՈՒ ՀԱՋԱՐԱՎՈՐ «ՔԱՐԵ ՏԱՇՏԱԿՆԵՐԻ» ԱՌԵՂԾՎԱԾԸ...

Մի քանի գետնուղիներ ու ստորգետնյա քարանձավներ (ակամատեսների վկայությամբ...) ունեցող այս հնավայրը ևս բազում գաղտնիքներ ունի...

«Սագյառ» ամրոցի պեղման աշխատանքների շարունակությունը տեղափոխել են հաջորդ տարի, որպեսզի այդ ընթացքում ճանապարհի կառուցեն՝ ավտոկուրսն և այլ տեխնիկա հնավայրին մոտեցնելու հնարավորություն ստեղծելու նպատակով:

Գոգարանի համայնքապետարանի քարտուղար Սանասար Սահակյանը տեղեկացրեց, որ արտերկրի մեր հայ և այլազգի (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա, Բելգիա, Լիբանան և այլն) բարերարների ու մասնագետների ուշադրության կենտրոնում են համայնքի հոգսերն ու նրա մշակութային հարուստ ժառանգությունը: Հաշվի առնելով այս հանգամանքն ու հնագետների հավաստումները՝ իրենք էլ նախատեսել են առաջիկա 5 տարիներին ևս շարունակել պեղումները՝ համոզված, որ կարդարանան իրենց հույսերն, ու համայնքը կդառնա զբոսաշրջության համար հետաքրքիր ու տեսարժան վայր:

Հնագետների խումբն այժմ աշխատում է 10-12 մ տրամագծով, կլոր շրջագիծ ունեցող դամբարանի կրունկեխի վերին շերտի վրա: Այժմ հստակ երևում է շրջագծի աղեղնաձև ձգվող քարերի շարվածքը, որոնց վրա կան տարբեր գծանշաններ՝ հավասարաթև խաչը

շրջագծի մեջ, եռանկյուն նշանների շարք և ուրվագծային այլ նշաններ...

Պեղման աշխատանքների հետագա ընթացքին և արժեքավոր գտածոներին կանդորդառնաք աշխատանքների ավարտից հետո:

Փորձառու հնագետներին հուզող մի հետաքրքիր ու առեղծվածային տարածք ևս կար, և նրանց առաջարկվում ենք եղանակ նաև նշված վայրում: Մեզ հետաքրքրող տեղանքն ընկած է Գոգարանի և Շիրակամուտի համայնքային հողատարածքների սահմանագատման վայրում Սպիտակ - Շիրակամուտ ավտոմայրուղու աջ լանջի երկայնքով (մոտ 1 կմ):

Մեր առջև բացվեց քարե տաշտակներ հիշեցնող մեծ ու փոքր բազմաթիվ ու բազմապիսի մուշների երկարածիգ շարանը (ուղ-

ղանկյուն, քառանկյուն, եռանկյուն և զանազան այլ տիպերի, ինչպիսին եղել է տվյալ բեկորի նախնական ձևը):

Հնագետների ցուցումով՝ 2 տարբեր հատվածներում մաքրվել են 2-ական տաշտակներ, որոնց վրա մշակման հետքեր չեն հայտնաբերվել, ուստի մասնագետները վերջնական եզրակացության չեն հանգել...

Այսպիսով՝ մնում է պարզել, թե առեղծվածային քարե տաշտակները ձեռագործ են, թե՛ բնական գործոնների հետևանք:

#### ՀՐԱԾԻԿ ԱՄՐՈՒԹՅԱՆ

Պատմական միջավայրի պահպանության Լոռու մարզային ծառայության գիտաշխատող *լուսանկարները՝ հեղինակի*



Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Դ տարի  
Հիմնադիր և հրատարակիչ՝  
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն  
ՀՀ, 2003 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2  
Հեռ.՝ +374 (322) 2-29-67  
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81  
Էլ. փոստ՝ [acrpc@acrpc.am](mailto:acrpc@acrpc.am), [lc@acrpc.am](mailto:lc@acrpc.am)  
Կայքէջ՝ [www.acrpc.am](http://www.acrpc.am)

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ ԱՄՆՈՒԿՅԱՆ  
Խմբագիր՝ Դերմինե ԲԱՐՈՒՅԱՆ  
Համակարգչային ձևավորումը՝ Արմեն ՕՍԻՊՈՎԻ  
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:  
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:  
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:  
Ստորագրված է տպագրության 2008 թ. 08.07:  
Տպաքանակը՝ 2000:  
Տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:

Իրավական մշակույթ  
Legal Culture  
Правовая культура  
SARUSYAN E. L. & CO